

սիացին, և Գերմանացին օտարանում է յաճախ իւր աղքից և օտարի մէջ ձուլում, Էջմիածնից զրկուած Հայերն էլ օտարաց մէջ ձուլուել են և կորել: Գիտութեանց հետ և աղքայնութեան ոգին պէտք է տիրէ մարդուս սրտին, որ միայն հայրենիքումն է և նորա յիշատակաց մէջ: Այսօր հայի հայրենիքն իւր եկեղեցին է. սորա կեդրոնը Ս. Էջմիածինն. այսուեղ է նորա հոգին սաւառնում: Ուստի և այն հայն որ իւր սրտի զգացմանց և մովքի մտածմանց առարկայ չէ անում Էջմիածինն և իւր պարտքը դէպի նա չէ ճանաչում, լինի նա թէ եկեղեցական թէ աշխարհական, շեղում է Հայութիւնից, իսկ նա, ով անտարբերութեամբ, չենք ուզում ասել թշնամութեամբ է նայում Ս. Էջմիածնայ վերայ—այդպիսին մայրատեաց զաւակ է. Հայ ազգի անդամութիւնից դուրս է: Հայ ազգը դարաւոր հիւանդ է—Ս. Էջմիածինն է նորա Պրոպատիկէ աւազանը: Այսուեղ է նորա հոգեոր բժշկութեան աղքիւրը: Այսպէս պիտի մտածէ Հայ ազգն և նրան բարի կլինի աշխարհիս երեսին:

Ա. ԷջՄԻԱԾՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԶԵՌԱԳԻՔ Ն^o 2064 Տօնացոյց, գրած 1775 թուականին և որից տպագրուել է Սիմէօն Կաթողիկոսի Ժամանակ, Տօնացոյցն, որ բաւական տարածայնութեանց առիթ տուեց, իւր Ժամանակ, բայց յետոյ ընդունուեցաւ ի գործադրութիւն.

«Փառք և գոհութիւն անլոելեան ձայնի ամենասրբոյ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. Որոյ առատաձիր շնորհաքն և ողորմութեամբն, և օգնականութեամբ բազմերախտի և հոգեծնի Հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչին: Ի լրումն եկեալ կատարեցաւ տպեցումն նորափայլ գըրքոյ» որ կոչի Տօնացոյց: Աշխատասիրութեամբ և հոգաբարձութեամբ սրբազնակատար Հայրապետիս մերոյ Տեառն Սիմէօնի յոգնաշխատ և գերիմաստ Կաթուղիկոսիս ամենայն Հայոց: Ի վերատեսչութեան սրբոց տնօրինականց տեղեացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ Տեառն Պօղոսի քաջարան վարդապետին Վանեցւոյ: Եւ ի դիմողութեան արքայապերձ մայրաբաղաքին Կոստանդնուպոլսոյ. Միանգամայն ծայրագոյն նուիրակին Սրբոյ Էջմիածնի, և փոխանորդին վերսիշեալ սրբազն Հայրապետին մերոյ՝ Տեառն Զաքարիս Համեստափայլ վարդապետին: Ի թուոջ Փրկչին մերոյ Ռ-22ե. և ի թուոջն մերում Ռ-ՄԻՒԴ. և յամսեանն ապրիլի եօթն ի Սուրբ Էջմիածին:

Ուրեմն որք վայելէք զսա նախապէս տուք փառս յաջողովին և տնօրինողին ամենայնի։ Եւ ապա յիշեսջիք ջերմուանդ ըլձիւ զվերոյիշեալ բարեմիտ և յոդնաջան Հայրապետոս մեր՝ հանդերձ հոգեոր և մարմնաւոր ծընողօքն և համայնիւք իւրանովքն կենդանեզք և ննջեցելովք։ Որ գոլովպաշարեցեալ և որպէս թէ կաշկանդեալ ի յամենոււտ կուսէ ի յամենաւեսակ միրիկ և ի բազմակերպ ալէկոծութիւնս ըստ չարաշունչ բերմանց ժամանակիս։ ո՛չ թուլանայ երբէք յայսպիսեաց Աթոռաշահ և ազգօգուտ գործառնութեանց։ Թէպէտ յօգնատաժան աշխատութեամբ և չափազանց զրամավատնութեամբ (որպէս ինքն ի կարճոյ ծանուցեալ է ի վերջին կոտկոջն իւրում)։ Յետ որոյ յիշեսջիք զհոգեծին որդեակն սրբազանիս մերոյ զիսահակ եպիսկոպոսն Գեղամացի, որոյ ամենայնի կարդաւորիչ և տնօրինիչ է գործոյս և գործավարացն սորին անձանձիր աշխատեցուցմամբ։ Ըստ սմին և զտիրացու Յարութիւն հջմիածնեցի, որ է փորագրող և քանդակող բոլորից գրեանց, պատկերաց, խորանաց, կանոնաց և այլոց ծաղկանշից, նաև տապող զրբոյս։ Ընդ սոսին յիշեսջիք և զտիրացու Միքայէլն և զտիրացու Արդանն, զշարօզն և զցրուոզն գրոցս։ Արժանի է յիշման և Շօռութեցի Մկրտիչ Արքեպիսկոպոսն, որ իրու նախկին հեղինակ եղև գործոյս այսորիկ որքան առ փորագրութիւն ի պողովատեայս։

Նաև՝ յիշեսջիք զհոգեծին և զհարազատ բնակին զաւակն մեծի Հայրապետիս մերոյ՝ զՄկրտիչ Արքեպիսկոպոսն, որ յամենայնի որպէս զմոյր հոգածու և ինսամատար լինի գործավարացն սորին հոգալով զկարիս և զպիտոյսն յամենայնի։ Ընդ սմին և յիշեսջիք զհարազատ միաբան և զանձանձիր գրագիրն սրբոյ և մեծի Աթոռոյս զՂունկիանոս վարդապետն Աշտարակցի, որ բաց ի հասարակ պաշտօնէ իւրմէ, քանիցս վերակրկնելով պարզագրեաց զգիքը զայս մեծաւ աշխատութեամբ ի շաղագրեցմանէ հեղինակին, ընդ սոսին և զայլ հարազատ ծառայս և սպասաւորս և զձեռնասուն աշակերտս մեծի Հայրապետիս յիշեսջիք ի Քրիստոս, որք ըստ կարեաց իւրեանց աշխատեցան ի գործս այս։ Եւ վերջապէս յիշեսջիք զարժանիս յիշեցման զծնունդս օրհնութեան, և զտունկն բարեբեր, զվառեալն Աստուածային սիրով և զսիրահարեցեալն ի յամենայնի օդուտ և ի պայծառութիւն ազգիս և եկեղեցեացս մերոց, զմեծահաւատ իշխանազուն իշխան Գրիգոր աղայն Զուլայեցի ի Հինդ բնակեալ, որ ըստ օրհնեալ ազգատու-մութեան Խոջիջանեան Զաքիկենց կոչի։ Ընդ նմին յիշեսջիք և զնորին օրհնեալ և ի Քրիստոս հանդուցեալ օրհնաժառանդ ծնողսն՝ (քառորդ էջ գատարկ է, երևի պ. Գրիգոր Զաքիկենցի ծնողաց անունները չե իմացել) քանզի գործոս այս բոլորովին ամենիւք պարագայսիքն և բնաւիւք ծախիւքն՝ վերոյիշեալ յԱստուծոյ օրհնեցելոյ՝ բարեպաշտի արդար և Տեառնատուր արդեամբն կարգաւորի և յառաջանայ ձրիապէս։ Որ և սիրավառ ջանացութեամբ միշտ կամի և հետեւի, և զայլս այսպիսիս, և քան զայս առաւել արձանագրելի յիշատակս յառաջացուցանել և հաստատել ի սուրբ Աթոռոջս ի յիշատակ յաւիտենական ինքեան և իւրայնոցն։ Որոյ զորտի բա-

ըի Խորհուրդն 8էր կատարեսցէ, և զուիտու նորին ի փառս իւր ընկալցի. Զ. Հշատակս նորին օրչնութեամբ պահեսցէ, և զփոխարէնն հատուացէ բազմապատկապէս իւրեան և իւրայնոցն ի հոգիս և ի մարմինս, աստ և ի հանդերձելումն. Եւ դուք յիշողքդ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ:

ԶԵՌԱՋԻՐ Ն 1261 Է ՄԵԼԻՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԵՌՈՒԹԵԱՆ ՅՈՂՆԱՆՈՒ, յԵՎԻՐԵՄ ՎԱՐԴԱՎԵՏԸ ՍԱԿԵԳԼՍ յԵՎՐՈՊՐԴԼՍ ԳԱԲՐԻԵԼԻ ԿԱՄՊՈՂԻԿՈՍԻ 1768 ԹԻՒ, ԱՐՄԱԳՐԱԾ Է 1785 Թ:

« Արդ՝ ընկալ զայս դուզնաքեսյ աշխատութիւնս մեր եղբայր Թէոդորոս, և պյցելու մեծին Անտիոքայ, որ ի յիշձ բաղձանաց քոց շարժեալ հանդիսացաք յերկս վաստակոյ բանիս մարգարէութեան Յօնանու՝ որ և ողն առեալ յԱստուծոյ կարողացաք հասուցանել յանկ. Բայց մինչ իրը ի նաւահանգիստ հասեալ կամէաք զուրախականն արձակել զհրացան՝ անդէն աղէտ իմն անհնարին հասին ի վերայ մեր, յար և նման աղէտից որդւոյն Ամաթեայ. Զի զոր օրինակ ի ցամաքեալ դդմենւոյն քաղէին ոդիք մարգարէին, և լաւ զմեռանիլն վարկանէր, քան անդուլ աշխատութեամբ զբանդագուշելն կոշկումամբ. ո՛չ ընդ հատ ինչ և մերս դիպուած առերերեալ օրինակէս, զի զինի բոսորաներկ մարմնով յեթեր կոյս թեացելոյ Եռամեծի Հայրապետին, և հօրեղբօրն իմոյ ըստ մարմնոյ. Տեառն Գարբիելի աստուածարեալ Կաթողիկոսի ամենայն Հայոց ժամանեցին ի վերայ մեր դիպուածք անդոհականք, հէնք և ասպատակմունք ի քառից կուսից ողորկել զմեզ. քանզի յորժամ հատաւ մահուամբ գեղուղէշ ծառս այս բարերեղուն՝ տապար առ արմին եղեալ յանօրինաց անտի առ այս նոմիկոս օրինաց, որ զԱստուածայինն բան նօթձէր միշտ բանական հօտին, անդէն անդ անկաւ զդլինով մեր արե կիզանօղ, և քաղէին ոդիք մեր ի տառապանաց անտի, և լաւ զմեռանիլն համարէաք. վասն զի կարի տագնապէր զմեզ հողմ բբարեր ի հիւսոյ իրրու առհնչեալ, և որպէս զտերև տարարեր զմեզ անդուլ իսուանկմամբ. Յորժամ լինէր տիւ՝ զցայդ խնդրէաք ախորժանօք, և յորժամ յայն ժամանէաք, զտիւ ունիլ կարի ցանկայաք, քանզի չէր տեղի ինչ ի տուընջեան՝ ուր զօղէաք, և ո՛չ գիշեր ինչ յորում ննջել կարեցէաք, զի մի քան զմի յառաջ ձեպել փութային նեղսառիթ դիպուածք, և ո՛չ սպասեալ մնային իրերաց հայլք վշտաց, չէր պահ, որ ո՛չ բամէր հողմ, և ո՛չ ժամ, զոր ոչ ձնչէր զմեզ խորշակ տապախառն. Ո՞ւր է Երեմիա զի յերկարածիգս յօրինեսցէ ի վերայ մեր ողբս արտասուաց. և Եսայի, նստեալ լացցէ զմեզ և աշխարեսցէ. վասն զի մարդադէմ գաղանքն այնոքիկ, յետ ըմբռնելոյ զերկրորդն հարէլ, և ի դաշտի անդ սպանանելոյ զվկայն խաչակիր ի պահոց սուրբ խաչին, ի հազար երկու հարիւր ծթ թուին Հայոց, ի տասներորդումն սեպտեմբերի յաւուր ուրբաթու (հանգոյն կենարարին մեր հանդիպելով նմա նահատակութեան հանդէս) ի վաղիւն յորժամ զշա-

բաժացեալն ի կենաց հանդուցաք ի գիր հանդստեան աւոր շաբաթու-
դարձ առին նյոյն արիւնոռուշտ գաղանքն խիզախելով ի վերսյ մեր, և զօրն
ողջոյն խոշտանկելով, զայս ինչ պահանջելով կամ զայն, զի ի բացասելն
մեր, պատճառս յսդելով նիւթեսցեն մեզ զշարիս, եւ մինչ յայս վատանգ
կայաք տագնապեալ և կոշկոճեալ ո՛չ պակաս քան զաւուրս տասն, մահու
անկալեալ քան կենաց, Անդէն կրկին հէնք և ասպատակմոնք, անդր ա-
ռաւել քան զնախորդս պաշարումն նոցա աւելի քան զքառերիւր արս սրի-
կայս և արիւնածարաւս, և առ այս ի ծուփս մեծ անկեալ՝ պյնուհետեւ ի
գերեզման վարկեաք զմեզ, քան զի ո՛չ զիս և եթ, այլ աղքատ առնել զմեզ
խորհէին, և մինչ այսպէս սպառեցան առ ի մէնջ բարիքն, և հատաւ ազա-
տութեան վստահութիւն, յայնժամ զզարմանալիսն ներդործեաց, վասն զի
սովոր է նա յանակնկալ ժամանակաւ ներդործել զհրաշալիս, և դարձուցա-
նել զյայդ զստուերս մահու, որպէս և աստ շրջեաց զսիրտս նոցա ի քաղց-
րութիւն, և զխորհուրդս նոցա չար ի բարի, ո՛չ բոլորովին միանդամայն,
այլ երևելիք ոմանք ի նոցանէ, եւ այսպէս ժամ գտեալ մեր հանդերձ հարբ
իմով ըստ մարմնոյ Մարկոս անուն աջապահ քահանային, որ է եղբայր ե-
ռամենծի Հայրապետին, անկաք ի ճանապարհ, որ առաջնորդեալ բերէր զմեզ
յԱստուածապահ քաղաքն՝ կոչեցեալ Ատանայ, Բայց մնաց ի Սիս հարա-
զատն իմ ըստ մարմնոյ, Գրիգոր անուն դպիր հանդերձ եռեակ ստեղղամբքն
իւր, ևս և բոլոր աթոռայինքն մնացին անդ ի սուրբ Աթոռն, իբրև որդիք
զրկեալք ի հօրն տեսութենէ, իսկ յորժամ տեառն շնորհիւ հասաք ժա-
մանեցաք և իջևանս կալաք յԱստուածախնամ քաղաքն Ատանա, անդէն
իբր շունչ առեալ հանդարտեցաք ի սրտարոփ լինելոյ, և արք տեղւոյս մե-
ծապէս մորմորէին ի վերսյ Խղճալի կերպարանաց մերոց, և յաղագս աղէ-
տայեղձ դիպուածոյն շնորհէին ոչ սակաւ միհիթարութիւն սիրելիքն մեր
աստուածասիրաց դասք, փարատելով դոյզն ինչ զանփարատելի տրտմու-
թիւնս սրտից մերոց, և ստիպեցին զմեզ լինել ժառանգ Հայրապետական
Աթոռոյն, որ և փութացուցին զնախայիշեցեալ ծերունի քահանայն, և
զհարազատն երէց Վեհապետեան և զծնողն իմ ըստ մարմնոյ ի Կոստանդ-
նուպոլիս, որ է մայրաքաղաք արքայանիստ, առ ի հրաման հանել յինքնա-
կալէն սարակինացւոց ըստ բնաւորեալ ծիսի, և այսպէս դառն և ի բազմա-
վրդով ժամանակի եղեւ աւարտումն սորա, որոյ զսկիզբն եղաք ի Բերիա. և
հասուցաք յանդ ի հայրենի գաւառս մեր, ի Սիս, ի մէջ ադինասարաս գե-
րամբիծ սրբոյ գահին Կիլիկիոյ, Ուստի, աղաչեմ զեեզ, սիրելիք իմ, ըն-
կալարուք սիրով զաշխատութիւնս մեր, իբր ի տատասկէ թուզ, և կամ ի
մորենուց խալող քաղելով, և հայցեցէք ի Քրիստոսէ չառնել անտես վաս-
տակոց իմոց, և արժանացուցէ զմեզ անտրտում և՝ յարազուարձ բերկրանօք
փառաւորել զամննասուրբ անունն իւր, որում փառք, պատիւ և երկրպա-
գութիւն յաւիտեանս յաւիտենից ամէն.